

ՄԱՐԴՈՒՄ ԱՎՏՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ  
ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ԱՐԴԻ ՆՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԸ

**Գ.Գ. Նարությունյան** - ՆՏ ՄԴ նախագահ (գեկույց Երեւանյան 15-րդ  
միջազգային խորհրդաժողովում՝ նվիրված ՆՏ Սահմանադրության  
15-ամյակին)

Միջազգային խորհրդաժողովի հարգելի մասնակիցներ,

Նարգարժան հյուրեր.

Սահմանադրական դափարանում անհատական դիմումների ինստիտուտի եւ վերջինիս զարգացման եվրոպական միությունների քննարկումն առանձնահատուկ կարեւորություն ունի մի քանի առումներով.

**նախ**` այս հարցում Եվրոպայում առկա մոտեցումները խիստ փարբեր են, եւ դրանք պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի. ա) **լիարժեք** համակարգի առկայություն (Գերմանիա, Իսպանիա, Չեխիա, Սլովակիա եւ այլն), բ) **սահմանափակ**, միայն օրենքի սահմանադրականության հարցի շրջանակները ներառող համակարգի առկայություն (Ռուսաստանի Դաշնություն, Լեհաստան, Նախաստան եւ այլն), գ) այդ ինստիտուտի **խսպառ բացակայություն** (Լիբվա, Մոլդովա եւ այլն): Նման վիճակն օրակարգային անհրաժեշտություն է առաջացնում բացահայտել ու գնահատել այս ոլորտում եվրոպական զարգացումների հիմնական միություններն ու եվրոպական իրավական չափանիշներին համապատասխանող համակարգային լուծումները.

**երկրորդ**` բազմաթիվ եվրոպական երկրներում ազգային արդարադատական համակարգերի արդյունավետության հետագա բարձրացման հիմնական ուղին իրավունքի գերակայության երաշխավորումն է, մարդու իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության գործուն համակարգերի արմատավորումը: Իսկ դա անհնարին է առանց **մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի** հուսալի ու լիարժեք ապահովման,

**երրորդ**` մարդու իրավունքների պաշտպանության վերաբերական ինստիտուտների գործունեության արդյունավետությունը նույնպես մեծապես պայմանավորված է ազգային համակարգերի գործունակությամբ: Դա առաջին հերթին վերաբերում է Մարդու իրավունքների եվրոպական դափարանին: Անհատական դիմումների արդյունավետ ինստիտուտի առկայությունը սահմանադրական արդարադատության ազգային համակարգին հաղորդում է էապես նոր որակ եւ մեծապես կարող է նպաստել Մարդու

իրավունքների եվրոպական դափարանի ծանրաբեռնվածության նվազեցմանը, որը ներկայումս դառնում է գրեթե անհաղթահարելի ու լրջագույն խնդիր:

Պակաս կարելու է նաև այն հանգամանքը, որ անհատական դիմումների միջոցով ոչ միայն պաշտպանվում են կոնկրետ անձի իրավունքները, այլև **անձը գործուն մասնակիցն է դառնում հասարակական հարաբերությունների սահմանադրականացմանը**, որոշակի առումով իրականացնում է անմիջական ժողովրդաիշխանության իր իրավունքը: Ցանկացած անհատական դիմում ունի նաև հանրային նշանակալի հեփաքրքրություն:

Թեև սահմանադրական անհատական գանգափի ինստիտուտը բացառիկ կարևորություն ունի մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության փեսանկյունից, սակայն այդ բնագավառում վերջինիս դերը կարող է գործուն համարվել, իսկ գործունեությունը՝ արդյունավետ սուկ այն դեպքում, երբ այն լիարժեք է ներդրված և գործում է այդ ինստիտուտի արդյունավետությանը նպաստող անհրաժեշտ ու բավարար գործառնական, կառուցակարգային ու դափարական ընթացակարգերի շրջանակներում:

Այս կապակցությամբ փեղին է հիշարակել լիարժեք սահմանադրական գանգափի վերաբերյալ փրված առանձին գնահատականներ:

Իսպանիայի սահմանադրական դափարանի դափարվոր Ռոդրիգես-Ջապարա Պերեսի վկայությամբ Սփրասբուրգի դափարան դիմել ցանկացող յուրաքանչյուր անձ պեփք է դիմի Իսպանիայի սահմանադրական դափարան, որը փրամադրում է այնպիսի իրավական պաշտպանություն, ինչը կանխում է վեճը Սփրասբուրգում շարունակելու հավանականությունը: Սահմանադրական դափարանը, որը հեփելում է Սփրասբուրգի դափարական պրակտիկային, բեկանում է այդ պրակտիկային հակասող ներպեփական դափարական որոշումները եւ կանխում վեճի շարունակումը Սփրասբուրգում:

Քերմանիայի Դաշնային Նանրապեփության սահմանադրական դափարանի նախկին նախագահ Նանս-Յորգեն Պապիերը Նայասփանում իր պաշտոնական այցի ընթացքում հեփելյալ կերպ գնահատեց անհատական գանգափի՝ Քերմանիայում ներդրված ինստիտուտի կարեւորությունը Եվրոպական դափարանում մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմին օժանդակելու փեսանկյունից. Քյուրգյուլուի գործով սահմանադրական դափարանի որոշումից ի վեր Քերմանիայում հնարավոր դարձավ անհատական գանգափի հիման վրա վիճարկել նաև կոնվենցիոն իրավունքի խափարումը...: Այս նոր պրակտիկայի արդյունքը հնարավորինս կլինի այն, որ Դաշնային սահմանադրական դափարանն ապագայում ավելի հաճախ կառնչվի Կոնվենցիայի եւ Եվրոպական դափարանի վճիռներին վերաբերող հարցերի: Այս ամենի արդյունքում

Էսպես մեծացավ Կոնվենցիայի ազդեցությունը նախկին պրակտիկայի համեմատությամբ:

Ուշադրության է արժանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր Զուբանչիչի դիտարկումը, համաձայն որի՝ «Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին քաջածանոթ սահմանադրական դատարան ունեցող պետությունը շատ ավելի քիչ է խոցելի իրավախախտ պետության դերում հայտնվելու առումով, մանավանդ, եթե Սահմանադրությունը նախատեսում է անհատական սահմանադրական գանգառի ինստիտուտ: Անհատական սահմանադրական գանգառների ինստիտուտները, ինչպիսիք են Իսպանիայում եւ Գերմանիայում կիրառվողները, սահմանադրական դատարաններին հնարավորություն են տալիս քննության առնել մարդու իրավունքների վերաբերյալ գանգառները մինչև դրանց՝ Եվրոպական դատարան հասնելը: Միաժամանակ, նման սահմանադրական զարգացումները շարունակաբար ներդաշնակեցվում են Եվրոպական դատարանի պրակտիկայի հետ: Այլ խոսքերով՝ սահմանադրական գանգառի գոյությունը պետության իրավական համակարգում... ներպետական սահմանադրական իրավունքի եւ Եվրոպական դատարանի իրավունքի փոխազդեցության, փոխներգործության լավագույն միջոցն է»<sup>1</sup>:

Առանց վարանելու կարող ենք ընդհանրացնել, որ պետությունները, ուր գործում է լիարժեք սահմանադրական գանգառի ինստիտուտը, ունեն առանձնահատուկ առավելություն իրավունքի գերակայության երաշխավորման հարցում, քանզի նման գանգառների քննությունը հնարավորություն է տալիս վերահսկել մարդու իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության համակարգի գործնականում բոլոր ասպեկտները: Այդ ճանապարհով է ապահովվում ու երաշխավորվում սահմանադրական իրավունքների անմիջական գործողությունը:

Որոնք են սահմանադրական գանգառի լիարժեք ու ամբողջական համակարգի արմատավորման արդի հրամայականները: Մեր կարծիքով, դրանք առնչվում են թե սահմանադրական եւ թե օրենսդրական լուծումներին եւ վերաբերում են հետևյալներին.

1. անհատական գանգառի ինստիտուտի միջոցով մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի երաշխավորում,
2. այդ ինստիտուտի միջոցով իրավական ողջ համակարգի սահմանադրական վերահսկողության երաշխավորում,
3. անհատական դիմումներով սահմանադրական դատավարության ընթացակարգերի արդյունավետության բարձրացում,

<sup>1</sup> judge zupancic/missions/ Relationship between constitutional law and the law of ECHR Bostjan M. Zupancic. Constitutional law and the jurisprudence of the European court of human rights.doc

4. քաղաքացիների դիմումների հիման վրա սահմանադրական դատարանների որոշումների լիարժեք ու ամբողջական կատարման երաշխավորում:

**Առաջին հիմնախնդիրը** ենթադրում է, որ սահմանադրական գանգափի ինստիտուտի իսպառ բացակայության կամ թերարժեքության պայմաններում հակասություն է առաջանում սահմանադրական դատարանի սահմանադրական գործառույթի եւ լիազորությունների միջեւ: Սահմանադրական դատարանները կոչված են ապահովելու Սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը: Սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները ճանաչվում են որպես անմիջական գործող իրավունք: Առանց այդ իրավունքների անմիջական գործողության երաշխավորման անհնարին է երաշխավորել Սահմանադրության գերակայությունը: Այս անհրաժեշտությունից ելնելով է, որ գնալով ավելի շար երկրներ են փորձում ներդնել անհատական սահմանադրական գանգափի ինստիտուտը եւ վերջին լուրջ քայլը, ինչպես գիտեք, արվեց Ֆրանսիայում:

Ասվածի լավագույն վկայությունը կարող է լինել նաեւ մեր երկրի փորձը: Անհատական սահմանադրական գանգափի ինստիտուտի ներդրումից առաջ՝ մինչեւ 2006 թվականը, ՆՏ սահմանադրական դատարանը 10 տարում քննության էր առել օրենքի սահմանադրականության հարցերով ընդամենը 8 գործ: 2006 թվականի ընթացքում ու դրանից հետո դատարանն այդքան գործ քննում է գրեթե յուրաքանչյուր երկու ամսում: Ընդ որում, միայն 2008 թվականից հետո 31 գործերով օրենքների դրույթները ճանաչվել են Սահմանադրությանը հակասող եւ անվավեր: Փաստորեն ձեւավորվել է որակապես նոր իրավիճակ:

Մենք խորապես համոզված ենք, որ իրավական պետության կայացումն առանց մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի լիարժեք երաշխավորման, առանց մարդուն եւ քաղաքացուն հասարակական հարաբերությունների սահմանադրականացման ակտիվ մասնակիցը դարձնելու անհնարին է: Այս առումով անհատական սահմանադրական գանգափի լիարժեք ինստիտուտի արմատավորումն այլընտրանք չունի, եւ առանց դրա լիարժեք չէ դատական սահմանադրական վերահսկողության ողջ համակարգը, քանի որ այն ի գործու չէ ամբողջական ձեւով իրացնել Սահմանադրության գերակայության ապահովման իր հիմնական գործառույթը:

**Երկրորդ հիմնախնդիրը** վերաբերում է նրան, որ սահմանադրական ցանկացած ինստիտուտի կողմից ընդունված իրավական ակտ, մարդու իրավունքները ոտնահարող ցանկացած գործողություն կամ անգործություն անհատական դիմումի հիման վրա պետք է դառնա սահմանադրական վերահսկողության օբյեկտ: Նենց սրանով են հիմնականում փարբերվում գերմանական ու իսպանական մոդելները, որոնք գործում են նաեւ մի շարք այլ երկրներում եւ կոչվում են լիարժեք համակարգեր:

Առաջին հերթին անհրաժեշտ է ամբողջական մոտեցում ամրագրել այն իրավական ակտերի վերաբերյալ, որոնց սահմանադրականության առնչությամբ քաղաքացիները կարող են դիմել Սահմանադրական դատարան: Սահմանադրական արդարադատությունը լիարժեք չի կարող լինել, եթե անհատական դիմումները սահմանափակվում են միայն օրենքի դրույթի սահմանադրականության շրջանակներում: Մասնավորապես, վերջին փաստանյայտների եվրոպական զարգացումները եւ Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանի փորձը վկայում են, որ սահմանադրական իրավունքների անմիջական գործողության երաշխավորումն անհնարին է, եթե բոլոր իրավական ակտերը չեն դառնում սահմանադրական արդարադատության օբյեկտ: Նենց Գերմանիայի, Իսպանիայի եւ մի շարք այլ երկրների սահմանադրական դատարաններն են սահմանադրական արդարադատության շրջանակներում հաջողությամբ համադրել ամերիկյան մոդելի հիմքում ընկած՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարն ու սահմանադրական արդարադատության քելզենյան մոդելը:

Ուշադրության է արժանի, որ Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարան կարելի է անհատական գանգաղ ներկայացնել նաև դատարանի որոշումների դեմ, ինչը հանդիսանում է հիշյալ համակարգի արդյունավետության կարևոր գրավականներից մեկը: Այն դեպքում, երբ որոշման դեմ բողոքը հաստատվում է, դաշնային սահմանադրական դատարանն անվավեր է ճանաչում համապատասխան դատարանի որոշումը և իրավական պաշտպանության բոլոր միջոցներն սպառված լինելու դեպքում գործը վերադարձնում է իրավասու դատարան<sup>2</sup>:

Բացի դրանից, մեր կարծիքով, Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանի գործունեության արդյունավետության կարևոր երաշխիքներից է նաև Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանի մասին օրենքի 90(1) հոդվածով ամրագրված կարգավորումը, համաձայն որի սահմանադրական բողոք կարող է ներկայացվել յուրաքանչյուրի կողմից, ով պնդում է, որ **հանրային իշխանությունը խախտել է նրա հիմնական իրավունքներից կամ 20(4), 33, 38, 101, 103 և 104-րդ հոդվածներով ամրագրված իրավունքներից մեկը**: Ներկայումս, եթե անձը գտնվում է, որ պետական իշխանության կողմից խախտվել է իր հիմնական իրավունքներից մեկը, նա

<sup>2</sup> Այդ առումով նշենք, որ դատարանների որոշումները հանդիսանում են սահմանադրական վերահսկողության օբյեկտ նաև մի շարք այլ երկրներում: Մասնավորապես, Ադրբեջանի Տանրապետության Սահմանադրության 130-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն յուրաքանչյուր ոք ... օրենքով սահմանված կարգով Ադրբեջանի Տանրապետության սահմանադրական դատարանում կարող է վիճարկել իր իրավունքները և ազատությունները խախտող օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ ակտերը, **դատական ակտերը**: Իսկ Վրաստանի Սահմանադրության 89-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան սահմանադրական դատարանը քաղաքացիների դիմումների հիման վրա լուծում է Վրաստանի Սահմանադրության երկրորդ գլխով նախատեսված հարցերը կարգավորող **նորմատիվ ակտերի** (որոնք կարող են հանդես գալ նաև դատարանների որոշումների փեսքով) սահմանադրականության հետ կապված հարցերը:

կարող է դիմել սահմանադրական դատարան պետական իշխանության **ցանկացած գործողության** առնչությամբ: Նման լուծման բացակայությունը լուրջ խոչընդոտ կարող էր դառնալ Տիմնական օրենքի առաջին հոդվածի այն հիմնարար դրույթի իրականացման համար, համաձայն որի դրանում ամրագրված հիմնական իրավունքներն անմիջական գործող իրավունքներ են: Մի շարք այլ երկրների սահմանադրություններ նույնպես ամրագրել են այդ սկզբունքը՝ շեշտելով նաև, որ իշխանությունը սահմանափակված է այդ իրավունքներով՝ որպես անմիջական գործող իրավունք: Սահմանադրական դատարանը, ինչպես նշվեց, չի կարող երաշխավորել Սահմանադրության գերակայությունը, եթե չի երաշխավորում իրավունքների անմիջական գործողությունը: Իսկ դա իրականացնել միայն իրավական ակտերի սահմանադրականության գնահատման ճանապարհով՝ անհնարին է: Նասարակական հարաբերությունների սահմանադրականացմանը զուգընթաց ավելի են կարեւորվում նաև իշխանական բոլոր ինստիտուտների գործողությունների կամ անգործության սահմանադրականության հարցերը:

Անհրաժեշտ ենք համարում հավելել նաև, որ Գերմանիայում սահմանադրական գանգաբի միջոցով օրենքների սահմանադրականությունն ստուգվում է ոչ միայն այն դեպքում, երբ գանգաբը ներկայացված է կոնկրետ օրենքի դեմ, այլ նաև այն դեպքում, երբ գանգաբը ներկայացվում է որևէ **վարչական կամ դատական որոշման դեմ**, որում, դիմողի կարծիքով, կիրառվել է Սահմանադրությանը չհամապատասխանող օրենք: Այդ առումով Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանի մասին օրենքի 95(3) հոդվածը նախատեսում է, որ այն դեպքում, երբ անվավեր ճանաչված որոշման հիմքում ընկած է Սահմանադրությանը չհամապատասխանող օրենք, վերջինս ճանաչվում է ուժը կորցրած<sup>3</sup>:

Նաշվի առնելով ներկայացված հանգամանքները, կարծում ենք, որ սահմանադրական արդարադատությունն առավել ամբողջական և մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից առավել արդյունավետ կարող է գործել այն դեպքում, երբ վերջինիս օբյեկտ են հանդիսանում նաև **դատարանների որոշումները, ինչպես նաև սահմանադրական ինստիտուտների գործողություններն ու անգործությունը**:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի **երրորդ խումբ հրամայականները**: Սահմանադրական դատավարության ընթացակարգերի արդյունավետության բարձրացումը փարբեր երկրներում փարբեր լուծումներ է ենթադրում: Այն վերաբերում է ինչպես

---

<sup>3</sup> Բացի դրանից, հարկ ենք համարում հիշատակել Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանի մասին օրենքի այն դրույթը, համաձայն որի՝ քրեական դատավարության օրենսգրքի դրույթներին համապատասխան նոր դատավարություն պետք է սկսել վերջնական մեղադրական դատավճռի առնչությամբ, որը հիմնված է Տիմնական օրենքին չհամապատասխանող կամ անվավեր ճանաչված օրենքի կամ Տիմնական օրենքին չհամապատասխանող ճանաչված օրենքի մեկնաբանության վրա: Այլ դեպքերում անվավեր ճանաչված օրենքի վրա հիմնված վերջնական որոշումները մնում են անփոփոխ: Այդպիսի որոշումները չեն կարող իրականացվել:

անհատական դիմումներն ընդունելիս գրիչների (ֆիլտրերի) արդյունավետ համակարգի արմատավորմանը, գործը դարաքննության նախապարաստելու ընթացակարգերին, գրավոր կամ բանավոր ընթացակարգով գործի քննությանը, այնպես էլ դարաքննության ընթացքին ու սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշմանն օրենքով ներկայացվող պահանջներին:

Այսպես գլխավոր խնդիրն այն է, թե որքանով է սահմանադրական դատարանի որոշումը միտված ապագային (վերաբերում է օբյեկտիվ իրավունքին) եւ որքանով է երաշխավորում խախտված սահմանադրական իրավունքի վերականգնումը (լուծում սուբյեկտիվ իրավունքի հարցեր):

ՆՏ սահմանադրական դատարանի փորձը վկայում է, որ չափազանց կարեւոր նշանակություն ունեն եւ ուշադրության են արժանի ինչպես սահմանադրական դատարանի որոշումների փարաժամկետման, այնպես էլ դրանց հեղադարձության հետ կապված հարցերի օրենսդրական հարակ կանոնակարգումը: Այդ առումով, մասնավորապես, ուշադրության են արժանի «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68-րդ հոդվածի իրավակարգավորումները:

***Մենք խորատես համոզվել ենք նաև, որ երբ նորմատիվ սկզբի սահմանադրականության հարցը քննության առարկա է կոնկրետ վերահսկողության շրջանակներում եւ նորմը ճանաչվում է հսկասահմանադրական, ապա միայն նոր հանգամանքների ի հայտ գալը իրավունքի լիարժեք պաշտպանություն չի կարող երաշխավորել: Սահմանադրական դատարանը պետք է իրավասություն ունենա բարձրացնելու իրավունքի խախտման համար նյութական փոխհատուցման հարցը: Այդ խնդիրը պետք է լուծվի այն տրամաբանությամբ, ինչ տրամաբանությամբ լուծվում են կոնվենցիոն իրավունքների խախտման դեպքում Սպրաստուրգի դատարան դիմածներին առնչվող հարցերը:***

Սահմանադրական դատարանի որոշումները պետք է այնպիսի տեղ զբաղեցնեն իրավական ակտերի համակարգում, որը վերջիններիս հնարավորություն փա առավել արդյունավետ իրականացնել սահմանադրական կարգի և մարդու իրավունքների պաշտպանությունը, մասնավորապես՝ դրանք չպետք է ունենան օրենքներից ցածր իրավաբանական ուժ: Օրինակ՝ Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանի որոշումները (նրանք, որոնք վերաբերում են իրավական ակտերի սահմանադրականությանը, մասնավորապես՝ նաև այն դեպքերում, եթե անհատական գանգառի արդյունքում օրենքը ճանաչվում է Նիմնական օրենքին համապատասխանող կամ չհամապատասխանող կամ անվավեր) ունեն օրենքի ուժ<sup>4</sup>: Միևնույն ժամանակ, նույն օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ իր որոշմամբ դաշնային սահմանադրական դատարանը

<sup>4</sup> «Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանի մասին» օրենքի 31(2) հոդված:

**րանը կարող է նշել, թե ում միջոցով այն պետք է իրականացվի, իսկ առանձին դեպքերում կարող է նշել նաև իրականացման մեթոդները:**

Վերը շարադրվածի առումով հարկ ենք համարում հիշարակել նաև ՏՏ սահմանադրական դատարանի որոշումների իրավաբանական ուժին վերաբերող կարգավորումը: «Իրավական ակտերի մասին» Տայասրանի Տանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքները պետք է համապարասխանեն Սահմանադրությանը և չպետք է հակասեն ՏՏ սահմանադրական դատարանի որոշումներին: Այդպիսի դրույթներ են նախատեսված նաև այլ իրավական ակտերի առնչությամբ, ինչը նշանակում է, որ ՏՏ օրենսդրությամբ սահմանադրական դատարանի որոշումներն ունեն ավելի բարձր իրավաբանական ուժ, քան օրենքները: Սակայն նման նորմի առկայության պարագայում չի հաղթահարված հակասությունը սահմանադրական դատարանի որոշման իրավական հետեւանքների եւ օրենքի դրույթն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ ընդունած օրենքի իրավական հետեւանքների միջեւ: ՏՏ սահմանադրական արդարադատության պրակտիկայում առկա են դեպքեր, երբ սահմանադրական դատարանն օրենքի նորմը ճանաչել է Սահմանադրությանը հակասող եւ անվավեր, իսկ մեկ րարի հետո Ազգային ժողովն օրենքի փոփոխությամբ դրույթ է ընդունել այդ նույն նորմի ուժը կորցնելու մասին: Տպավորությունն այն է, որ անվավեր նորմը շարունակել է ուժի մեջ մնալ: Նման օրենսդրական խառնաշփոթը համանման հետեւանքներ է ունենում իրավակիրառական պրակտիկայում, որը հարիր չէ իրավական պետության հիմնարար սկզբունքներին:

Որոշ երկրներում օրենսդրությամբ կարգավորվում են նաև սահմանադրական դատարանի որոշումների կատարման առանձնահատկությունները: Օրինակ՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՌԴ օրենքի 80-րդ հոդվածն ամրագրում է ՌԴ սահմանադրական դատարանի որոշման առնչությամբ օրենքները և այլ նորմադիվ իրավական ակտերը ՌԴ Սահմանադրությանը համապարասխանեցնելու հետ կապված պետական մարմինների և պաշտոնատար անձանց պարտականությունները: Մասնավորապես, կարգավորվում են նաև համապարասխան իրավական ակտերն ընդունելու կամ նախագծեր ներկայացնելու ժամկետները, այդ պարտականությունը կրող մարմինները և վերը նշված հիմնախնդրի այլ առանձնահատկությունները: Կարծում ենք, որ սահմանադրական արդարադատության արդյունավետության րեսանկյունից նպատակահարմար է առավել մանրամասն օրենսդրական կարգավորում ամրագրել սահմանադրական դատարանի որոշումների կատարման առանձնահատկությունների առնչությամբ, որպիսի օրինակ կարող է հանդիսանալ նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՌԴ օրենքի վերը նշված կարգավորումը:



Կարծում ենք, նպատակահարմար կլինի այն իրավիճակի վրա շեշտադրում կատարելը, ըստ որի՝ նորմատիվ սահմանադրական գանգառի շրջանակներում սահմանադրական դատարանը հնարավորություն չի ունենում անդրադառնալ այդ նորմի հիման վրա ընդունված անհատական ակտի սահմանադրականությանը: Նշված հիմնախնդիրն ավելի է կարելիորվում, երբ դիմողի սահմանադրական իրավունքի խախտումը պայմանավորված է ոչ թե վիճարկվող նորմատիվ ակտի, այլ այդ ակտի հիման վրա ընդունված անհատական ակտի սահմանադրականությամբ:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ երբ սահմանադրական դատարանը վիճարկվող նորմը Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչում կոնկրետ մեկնաբանությամբ, օգնում է պահպանելու փոխյալ նորմատիվ ակտը, սակայն դա անարդյունավետ է, եթե ընդհանուր իրավասության եւ վարչական դատարանները չեն հետեւում այդ մեկնաբանությանը:

Կարծում ենք, նպատակահարմար է օրենսդրորեն նախատեսել որոշակի իրավական միջոցներ, որոնք հնարավորություն կտան ապահովելու նշված հայեցակարգի կիրառման արդյունավետությունը: Մասնավորապես, այդ խնդրի լուծմանը կարող է ծառայել ընդհանուր իրավասության դատարանների կողմից սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներով առաջնորդվելու պահանջի օրենսդրական ամրագրումը:

Կոնկրետ դիմողի իրավունքների պաշտպանության եւ վերականգնման փեսանկյունից ծագում է նաեւ վերոհիշյալ մոտեցման կիրառմամբ՝ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա փոխյալ դիմողի առնչությամբ կայացված դատական ակտի վերանայման անհրաժեշտության հարցը: Որպես կանոն, սահմանադրական դատարանի որոշումը դիմողի առնչությամբ կայացված դատական ակտի վերանայման հիմք է հանդիսանում այն դեպքում, երբ փոխյալ նորմը ճանաչվել է Սահմանադրությանը հակասող: Ուստի վերոհիշյալ մոտեցման արդյունավետությունը կոնկրետ դիմողի իրավունքների պաշտպանության փեսանկյունից կարող է ապահովվել այն դեպքում, երբ փոխյալ դիմողի առնչությամբ կայացված դատական ակտը վերանայվի նաեւ այն դեպքում, երբ թեեւ նորմը ճանաչվել է Սահմանադրությանը համապատասխանող, այնուամենայնիվ, դիմողի նկատմամբ կիրառվել է ոչ այն մեկնաբանությամբ, որի շրջանակներում սահմանադրական դատարանը փոխյալ նորմը Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչել: Ներկայումս մի շարք երկրների սահմանադրական դատարաններ, օրինակ՝ Գերմանիա, Լատվիա, Նայասպրան եւ այլն, ձեւավորել են նաեւ այնպիսի պրակտիկա, երբ իրավական ակտի նորմը ճանաչվում է սահմանադրական՝ փոխյալ որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում: ***Այսինքն, եթե սահմանադրական դատարանը նորմը***

**ճանաչում է սահմանադրական՝ փոխյալ որոշման մեջ իր կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում, սպա այս որոշումը պետք է նոր հանգամանքների հիմք հանդիսանա եւ հնարավորություն քա այդ դիրքորոշումների շրջանակներում գործի վերանայման:**

Նախկապես երկրասարդ ժողովրդավարության երկրներում լուրջ անելիքներ կան նաեւ նոր հանգամանքների ինստիտուտի արդյունավետության բարձրացման հարցում: Սահմանադրական դատարանի որոշումը կոնկրետ դիմողի համար նշանակություն է ձեռք բերում միայն այնքանով, որքանով իր գործի վերանայման նոր հանգամանք է առաջանում: Գործնականում արձանագրվում են զավեշտական իրավիճակներ, երբ այդ վերանայման արդյունքում, որպես կանոն, դատական ակտը վերաշարադրվում է գրեթե նույնությամբ՝ առանց այն հոդվածի, որը ճանաչվել է Սահմանադրությանը հակասող եւ անվավեր: Բնականաբար, նման պայմաններում առաջանում են մի շարք հարցեր: Մասնավորապես՝ ի՞նչ ասել է դատարանի կողմից օրենքի նորմի կիրառում, ինչպե՞ս են դատարանները հասկանում եւ իրացնում իրավական պետության այն հիմնարար սկզբունքը, համաձայն որի մարդու սահմանադրական իրավունքները գործում են անմիջականորեն, ի՞նչ ասել է դատական ակտի վերանայում եւ այլն: Դատական պրակտիկան վկայում է, որ այս հարցերն առավել հստակ իրավական կարգավորման առարկա պետք է դառնան:

Ելակետային, մեր կարծիքով, պետք է համարել, որ անհատական զանգառի ինստիտուտը կարող է արդյունավետ լինել սոսկ այն դեպքում, երբ վերջինս հնարավորություն է տալիս լիարժեքորեն ապահովել մարդու իրավունքների պաշտպանությունը: Ներկաբար, վերը նշված հարցի առնչությամբ պետությունների ընդհանուր դիրքորոշումը պետք է նպատակաուղղված լինի սահմանադրական դատարանի համապատասխան որոշումների արդյունքում **դատական ակտերի արդյունավետ վերանայման համակարգի ամրագրմանը:**

Շնորհակալություն ուշադրության համար: